Պայքար, բայց... առանց աշխատանքի՞

Արնշատ

ՕԽԻԿՅԱՆ

Բանվոր

Հանրահավաքներում ու ցույցերում ազատության բերկրանք ապրելու երազանքով տարված հայ ժողովուրդը չկարողացավ հասկանալ, թե ինչպես հայտնվեց սեփական ձեռքերով ստեղծված փակուղում: Ճշմարտությունը, երբ ասվում է ինձ նման շարքային քաղաքացու կողմից, ամենևին էլ դատապարտելի չէ, ինչպես «թագավորի մերկությունը» առաջինը նկատած պատանու մեղքերը:

Նոր հիմունքներով ստեղծված հանրապետության ժողովուրդը փաստորեն գտնվում է բարձիթողի վիճակում. ինչպես սեփականաշնորհված մի հողակտոր, որը ոչ տերն է վարում, և ոչ էլ տալիս է ուրիշին: Այսօրվա կառավարությունը կարծես ձեռքը դրել է իրեն հատկացված հողակտորին, ու փորձում է առանց ցանքսի, քաղհանի, ջրելու և լավ մշակելու՝ բարձր բերք ստանալ: Խորհրդարանում ընթացող նստաշրջանները նմանվում են հնձի հավաքված, բայց հնձից ոչինչ չհասկացող հնձվորների գյուղամիջյան բանավեճի, ուր իշխող մեծամասնությունը խեղդամահ է անում որևէ խելոք ու բանիմաց առաջարկ, թեև որոշ ժամանակ անց, նույն առաջարկը, որոշ ձևափոխումներով, բերվում է մեջտեղ մեկ այլ պատգամավորի կողմից և ի վերջո՝ ընդունվում: Ինչ է սա. աչքակապությո՞ւն, պահմտոցի՞, թե՞ հին, բյուրոկրատական վարչակարգից փոխ առնված ճարպիկ խաղ: Պակաս հետաքրքրքրական չէ, թե ինչպիսին կլիներ վիճակը, եթե համայն հայությունը ամեն օր հասու լիներ օգտվելու նորությունների ծառայությունից՝ մամուլից, ռադիո-հեռուստատեսային օբյեկտիվ ու լիարժեք հաղորդումներից: Ներկայումս մի շարք քաղաքներից ու շրջկենտրոններից բացի, գրեթե բոլոր գյուղական վայրերում խախտված է կապի բաժանմունքի ռիթմիկ աշխատանքը, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, հեռախոսակապ ընդհանրապես գոյություն չունեն: Իսկ տրանսպորտային ծառայության գնե՞րը...

Ձեմ կարծում, իշխանության ղեկի մոտ կանգնած արդի առաջնորդները, իրենց 1988-ի միտինգային վառ ելույթներում մշակում էին ժողովրդին նման վիճակի հասցնելու ծրագիր, բայց և չի՞ զգացվում վիճակի շտկմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու գործնական ու կտրուկ փորձ:

Ղարաբաղյան հարցը ամուր վահան է դարձել («պատերազմ է, խառը իրավիճակ, շրջափակում...»), իսկ երկիրը սնանկանում է, թեև դա փորձում ենք կապել միայն պատերազմի ու Ղարաբաղի հետ: Որոնք էլ լինեն ժողովրդի սոցիալական պայմանների վատթարացման, նրա սնանկացման, հոգևոր քաղցի պատճառները, դա մեծագույն չարիք է: Իսկ ժողովուրդը լռում է, և պետք է, որ առայժմ լռի. քավության նոխազ չդառնալու վախի զգացումից առավել սարսափելի ոչինչ չկա...

Ես բանվոր եմ, աշխատող ձեռք՝ պատրաստ ստեղծելու, արտադրելու այն, ինչ ներկայումս առաջին անհրաժեշտության ապրանք է կոչվում (իմ ձեռք բերած անկախությունն ու ազատ վիճակը պահպանելու համար): Իհարկե, այդ բոլորը պայմանավորված է նաև ցանկացած աշխատողի ընտանիքի սոցիալական պայմանների բարելավմամբ: Սակայն ինչպես Շահումյանի ու Մարտակերտի ինքնապաշտպանության ջոկատներն էին մատնված բարձիթողի վիճակի, նույնպես և ընդհանուր բանվորության ռիթմիկ աշխատանքն է խափանված՝ ժողովուրդը չի՞ տեսնում այն ի մի բերող, կարգավորող ձեռքը: Երբեմն ասում ենք՝ մենք դարերի խորքից եկող, խելոք, հին, հանճարեղ ու զտարյուն ժողովուրդ ենք, և իրավունք չունենք թույլ տալ վարելու ինքնաոչնչացման քաղաքականություն: Բայց մի՞թե այսօրվա իրավիճակը չի տանում ինքնաոչնչացման: Անցյալ ձմեռը մի կերպ կարողացանք ճանապարհել, իսկ եկող ձմռանն ինչպե՞ս ենք դիմակայելու:

Իհարկե, ես չէ, որ պետք է մեխանիզմներ մտածեմ դրությունը փրկելու համար: Իմ ընտրատարածքի պատգամավորն էլ (Աշոտ Ձախոյան) ամենևին նման հարցով չի զբաղվում, նույնն էլ՝ մնացյալները: Ցուրաքանչյուր ոք առաջ է մղում իր անձնական շահերը. «Առաջ քո ծառը ջրիր, նոր՝ ուրիշինը»: Ես ներկայացնում եմ գյուղացու, հասարակ ժողովրդի կարծիքը, որը մեծամասնություն է կազմում և, բնական է, չի սխալվում, աղյուսես հպարտորեն չի դրվատի Ռաֆֆի Հովհաննիսյանին՝ որպես դիվանագիտության մարգարիտի:

Նույն ժողովուրդը ամբողջ անկեղծությամբ հարգում է Գագիկ Հարությունյանին, որպես հավասարակշիռ, իր գաղափարներից չշեղվող անձնավորության, միաժամանակ բարձրաձայն աղաղակում է՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկական նախագահ կկոչվեր, եթե չշեղվեր բազմակուսակցական պառլամենտ ունենալու գաղափարից: Այսօր հայ ժողովուրդը գտնվում է պատերազմի մեջ՝ նշանակում է աշխատանքը և պայքարը համազոր են: Պարզ է, որ պատերազմ գնում են երիտասարդները, բայց չպետք է թույլ տալ, որ այդ գործին խառնվեն ինքնակոչ խմբեր ու խմբավորումներ: Վերլուծելով մեր ազատագրական պայքարի ընթացքում, կրիտիկական պահերին զոհված յուրաքանչյուր հայորդու պատմությունը, զգացվում է, որ հայ ժողովուրդը կորցնում է իրոք տվյալ գործին հասու ու նվիրյալ անհատներին, լավագույններին: Փաստորեն հայրենիքին նվիրված, ազգի դառը ճակատագրին առավել դիվանագիտորեն սատար կանգնող մարտիկները զոհվում են անիմաստ, անհավասար մարտերում, Արցախի դժվար լեռներում, իսկ բախտախնդիր, աթոռամոլ, միջազգային օրենքներին, իրավունքներին ու օգնությանն ապավինած անհատներ վայելում են պաշտոններում մնալու բերկրանքը, փնտրում իրենց ապագան առավել լուսաշող դարձնելու ուղիներ:

Ներկայումս ինձ համար, հազարավոր ինձ նմանների համար անհրաժեշտություն է լսել ու զգալ համընդհանուր միաբանության ձգտման լիարժեք կոչեր: Պայմաններ, ուր պայքարողը կարողանա գտնել իր տեղը՝ զբաղվել իր պայքարով, իսկ աշխատավորը՝ վերագտնի իր աշխատանքը՝ զբաղվի իր աշխատանքով: Որպեսզի մեր հայրենի, միակ ու սուրբ օջախում ամուր բաղդատվեն ու սերտաճեն աշխատանքի և պայքարի գաղափարները: